

## ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՑ

Ամսոյս 17-ին, հինգշաբթի, կովկասի Տ. Փոխարքան սղամբ ժամանեց Թիֆլիզ իր ամուսնու հետև:

Թիֆլիզի քաղաքային ինքնավարութիւնը արտակարգ ընդունելութիւն ցոյց տուեց ծանր հիւանդութիւնից ապաքինուած Փոխարքային:

Քաղաքային ինքնավարութեան այս ցանկութեանը մեծ համակրանքով ընդառաջ գնաց Թիֆլիզի ազգաբնակութիւնը և ցոյց տալով իր առանձին սէրն ու համակրանքը՝ ցնծութեան ողջոյններով ընդունեց իր սիրելի Փոխարքային:

Ռուսաստանի նուաճումից յետոյ կովկասեան Փոխարքաների և կառավարիչների պատմութեան մէջ փայլուն էջեր են կազմում Մ. Ա. Վորօնցովը, Մեծ իշխ. Միխ. Նիկոլայեվիչը և ի. ի. Վորօնցով-Դայկովը իրենց ժողովրդամէր ու իմաստուն կառավարութեամբ և խաղաղ քաղաքականութեամբ, որով երկիրը խաղաղացրել և հաւատարիմ հպատակութեան զգացմունքով սերտ կապել են Ռուսաստանի Մեծ Կայսեր և ժողովրդի հետ և իրենք մեծ ժողովրդականութիւն ձեռք բերելով՝ սիրելի են դարձել կովկասի բազմացեղ ազգերին:

Կովկասի Տ. Փոխարքան բաղդ ունենալով ներկայանալ Նորին Կայսերական Մեծութեան Լիգադիայում՝ իր ամենահպատակօրէն զեկուցումը կովկասի ազգերի մասին տալուց յետոյ՝ կրկն դառնում. Է մեր երկիրը բերելով Թագաւոր Կայսեր ողջոյնը յանուն Կովկասի ժողովրդեան և հաւանութիւնը գործելու նոյն շաւղով:

Հայ ժողովուրդը ողջունելով իր սիրելի Փոխարքայի գալուստը՝ ցանկանում է նրան երկար կեանք:

## ԹԱԴԱՒՐ ԿԱՅՍՐԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՒՐՆԵՐԸ

Թագաւոր Կայսրը բարեհանել է հետևեալը հեռագրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

Հիվադիա, 14 հոկտ.

Նորին Սրբութիւն Կաթողիկոսին Ամենայն

## Հայոց:

Նորհակալ եմ Ձեզ և յանձնարարում եմ հաղորդել էջմիածնում տօնախմբութեան բոլոր ժամանակիցներին իմ հնորհակալութիւնս՝ ազօթքների և ինձ արտայատուած ամենահպատակ զգացմունքների համար:

## ՆԻԿՈՂԱՑ

Այս հեռագիրը պատասխանն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետևեալ հեռագրի:

Էջմիածին, 13 հոկտ.

Լիգադիա, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին:

Հայաստանում քրիստոնէական լուսաւորութեան հիմունքը դնող յաւերժայիշատակ և Մեսորպի և Սահակի ձեռքով գտնուած հայ տառերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի յօրերենական հանդէսներին էջմիածնում ժողովուած հայ ժողովրդի բոլոր խաւերի, բարեգործական ու կրթական հաստատութիւնների ներկայացուցիչները ջերմ ազօթքների վերառաքելով ինձ հետ և ամբողջ միարանութեան հետ միասին նախաթոռ տաճարում ջերդ կայսերական Մեծութեան և հանուր Օգոստափառ Տան երկարակեցութեան ու երջանկութեան համար՝ առ ոստ ջեր Մեծութեանն են արկանում ամենահաւատարիմ հպատակութեան և անսահման սիրոյ ու երախտագիտութեան զգացմունքներ:

Թող Ամենակարող Աստուած երկարէ ջերդ Մեծութեան օրերը ի փառս քրիստոնէական եկեղեցւոյ և ի բարօրութիւն Մեծ Ռուսաստանի հէորդ Կաթողիկոս Ամենայն Հայոց

## ՓՈԽԱՐՔԱՅԻ ԵՒ ՄԵՍՐՈՊ ԵՊ. ՀԵՌԱԳԻՒՐՆԵՐԸ

Հայ տառերի գիւտի և տպագրութեան յօրելեանների առիթով խասաւ-իւրտ կայտրանից (Վլադիկաւկազ. գիծ) հոկտ. 16-ին կովկասեան Փոխարքայից Թիֆլիզում տացուած է հետևեալ հեռագիրը.

Նորին սրբազնութիւն Մեսորպ եպիսկոպոսին.

Նորհակաւորելով հայ տառերի գիւտի 1500-ա-

մեայ կուլտուրական հանդիսաւոր տնտեսատարութիւնը, կինս և ես սրտանց շնորհակալ ենք Զեղանից և բոլոր ներկաներից՝ բարի ցանկութիւնների համար։ Կօմս Վօրօնցով։

Այս հեռագիրը պատասխան է Մեսրոպ եպոսի քաշած հետեւեալ հեռագրին։

### «Լիվադիա».

«Նորին Կայսրական Մեծութեան Փոխարքային Կովկասի, Պայծառափայլ Կոմս Խլարիսն իվանովիչ Վօրօնցով-Դաշկովին։

«Այսօր, հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի օրը, ի ներկայութեան Զեր փսխանորդի՝ գեներալ Շատիօվի, իշխանութեան և զանազան դաւանութիւնների հոգեորականութեան, բարձր ներկայացուցիչների, ինչպէս և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչների և ժողովրդի բոլոր խաւերի բազմաթիւ ժողովի, կայացաւ հայոց հոգեոր գպրոցի նոր շինութեան մէջ համազգային յօրելեանի տօնախմբութիւնը և բազում կեանս մաղթուեց Պաշտելի Վեհապետին հայկական կուլտուրայի Հովանաւորին և ամբողջ Արքայական Տան։ Կոմսուհի Ելիզավէտա Անդրէհնայի և ձեր պայծառափայլութեան երկարակեցութիւն մաղթանքը ընդունուեց բոլոր հաւաքուածների ինդագին աղաղակներով։ Մատուցանելով Զեր Պայծառափայլութեան խորագոյն շնորհակալութեան զգացումներ այն անփոփոխ հովանաւորութեան համար, որ Դուք ցոյց էք տալիս հայ հասարակութեան բոլոր կուլտուրական-հոգեոր ձեռնարկութիւններին և վեր առաքելով աղօթք Ամենաբարձրեալին Զեզ առողջութիւն և երկարակեցութիւն պարդեելու համար ամենաանձնուիրաբար խնդրում եմ Զերդ Պայծառափայլութիւնից արկանել յատա նորին Կայսերական Մեծութեան՝ հօտի և բոլոր հաւաքուածների անունից անսահման սիրոյ, անձնութիւններին և երախտագիտութեան ամենահատակական զգացումը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑԲԵՐԸ ՄԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ ԵԲ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԿԱՐԱՎՈՒՄԸ ՀԱՐԹՆՈՒՄԸ

ՀԱՐԹՆՈՒՄԸ

«Եատ դառն էր ինձ համար համոզուել, թէ աշխարհը պատկանում է զօրեղներին»։

Դարվին

### XVI

Այդ ընդհանուր բազարական անցուգարձի շրջանում ոռւս գիւանագիտութիւնը իր կողմից Աւստրիայի պահանջների ու պատերազմական սպառնալիքների գէմ պահպանում էր երկար ժամանակ հանելուկային լռութիւն՝ նիւթ տալով իր օտարազգի անբարեացակամներին աղմկայի և սուր իրարանցումների, որոնք թողնում էին գործերի ընթացքի վրայ որոշ ազգեցութիւն։ Ուուս գիւանագիտութիւնը, որը՝ ինչպէս ենթադրում էին՝ Սերբիայի պաշտպանն ու հովանաւորողն է, գործերի այդ սուր ու տենգալին ընթացքում երեան չեկաւ իր զօրեղ արտայայտութեամբ պարզելու իր հայեցակէտը և այս կողմից իր փոխարէն խօսելու ու գործելու ասպարէզը յանձնել էր ֆրանսիական ներքին գործերի նախարար Բայմօնդ Պունկարէին, որը իր կողմից շնորհայի կերպով կատարում էր իր՝ առանձին զդուշութիւն պահանջող գերբ։

Բայց և այնպէս վերջում եւրոպական պատերազմի ուրուականը չբացնելու և ոռւս հաստրակութեան որոշ մասին մթութեան մէջ գեղեցերելուց հանելու համար նա սահպաւած էր խզել իր լռութիւնը և հրապարակ ելնել իր յայտարարութեամբ։ Եւ ահա այդ մտքով Պետական Դումայում երեան եկաւ արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ ոչ թէ ոռւս գիւանագիտութեան անմիջական դեկավարը, այլ նախարարական խորհրդի նախագահ Կոկովցի ընդհանուր յայտարարութիւնից յետոյ, որը տեղի ունեցաւ գեկա։ 5-ին (1912 թ.), պարունակում էր իր մէջ ընդհանուր գարձուածքներ, որոնք ըստ երեոյթին բաւարարութիւն էին տալիս թէ մէկ և թէ միւս կողմին։

«Պատերազմական հաղուագիւտ քաջագործութիւնները գաշնակից զօրքերի, —ասաց նա ի